

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ «ԳԵԼՆ ՈՒ ՉՈՐԱՆԸ» ԽԱՂԻ ՄԻ ՆՈՐ ՎԱՐԻԱՆՏԸ



Իրո մեծ քնարերգու - բանաստեղծ Սայաթ-Նովայի թողած և մեր ձեռքը հասած տաղերը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին և ամենահիմնական խմբին հնչողականում հեղինակի ձեռքով գրված այն տաղերը, որոնք անաղարտ պահպանվել են նրա տաղարաններում ու աղագրից էլ անմիջականորեն լույս աշխարհ հանվել: Նրկորոգ խմբի մեջ մտնում են այն տաղերը, որոնք անմիջապես հորինվել են Սայաթ-Նովայի կողմից, բայց նրանից հեռանալով և ժամանակի ընթացքում բերն-բերան անցնելով հետզհետե ենթարկվել են զանազան երանգավորումների: Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ հետնորդ սերունդները չեն զաղարել այս տաղերի իսկական հորինող համարել մեծ քնարերգու Սայաթ-Նովային: Սայաթ-Նովայի կենսագիրներից ոմանք այս երկրորդ խմբի տաղերը ուշադրության չեն առել և բավականացել են հայտարարելով, որ նա իր «ազատ ժամերին» փորձեր է արել, որ «դա արժանի չէ Սայաթ-Նովայի վարպետ գրչին» և այլն:

Հայկական ՍՍՄԻ Պետական Կենտրոնական Արխիվում մեր կողմից հայտաբերվել է մի ձեռագիր պիես, որի հեղինակի ով լինելը տակավին անհայտ է, քանի որ սկզբի թեթևերը պակասում են. ահա այս պիեսում էլ գետնեղված է Սայաթ-Նովայի «Գելն ու չորան»



Սայաթ-Նովա
Դոստ' նկարիչ Հ. Ռուխկյանի

նր մեկզմեկու դեմ էլան» խաղի մի նոր վարիանտը:

Արվեստի վաստակավոր գործիչ սայաթ-նովազես Գարեգին Լևոնյանն իր «Սայաթ-Նովա, կյանքը և գործը» աշխատության մեջ գետնեղել է «Գելն ու չորանը» խաղի երկու

վարիանտը, վերցնելով դրանցից մեկը Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիզեցւոց մտաւոր կենսութեան» աշխատութիւնից, իսկ մյուսը Սկանդար-Նովայի «Վովկասի լրաբեր» թերթում (1912 թ.) լույս ընծայածից:

Պետք է ասել, որ հիշատակված այս երկու վարիանտների և մեր հայտնաբերածի միջև բավականին տարբերություններ կան, և

հատկապես դա վերաբերում է հանգավորութեանը: Որպեսզի ընթերցողները ճիշտ պատկերացում ունենան հրատարակված վարիանտների և մեր հայտնաբերածի տարբերությունների մասին, անհրաժեշտ ենք համարում բերել մի համեմատություն:

Գ. Լևոնյանի աշխատության մեջ կարդում ենք.

Գեյն ասավ հետոյ քա՛հուն կու քա՛հուն էլ շիմունաւ,

Ակոնքս կու գցիմ դո՛շի դմակին,

կու գցիմ քա՛մակիս.

Առուտեհան մե-մեկ սարի ծերին շանց կուտամ:

Իսկ նոր հայտնաբերվածում գրված է.

Գեյն ասավ էնդադա կու մնամ ամբը ծմակի

ակրիս կու կայցնիմ դո՛շի դմակին

քէ լավ էլ գցեցի էս իմ քա՛մակին

առուտեհան սարի ծէրին շանց կուտամ:

Այս համեմատությունից երևում է, որ նոր հայտնաբերվածի և նախորդ հրատարակվածների միջև տարբերություններն ակնհայտ են. այսպիսի տարբերություններ գոյություն ունեն ոչ թե մի քառակուսի, այլ յուր ջառջակներում:

Ստորև ղետնողում ենք մեր հայտնաբերած

վարիանտն ամբողջությամբ, թողնելով սալաթնովագիտութեամբ զբաղվողների հայեցողությանը տարբերությունների և նմանությունների համեմատությունը:

Պիեսի հերոսներից մեկը՝ Թիֆլիսի վաճառական Ստեփանը գինու բաժակը վեցնելով սկսում է երգել. —

Գեյն ու չօքանը մէկգմէկու դէմ էլան
գեյն ասավ քա՛հով տիսանք չօքան ախպէր
չօքանն ասավ գլխէմէս ուղ իլ
քու քա՛հովն ինչ կօնիմ իմնի անդէր

Գեյն ասավ էնդադա կու մնամ գեղինն մթնի
ուսուլով ման գուքամ բինէտ կու գքնիմ
ինչ օր կուտիմ կու խիխտիմ էնդի վեր կօծիմ
առուտեհան խերն ու շառը շանց կուտամ:

Չօքանն ասավ դուն հէնց գիղիս եիս գիշերով քուն ունիմ
ամէն դօշի գլխին մէ մէ շուն ունիմ
քէ դուն ինձ մօդ գուքա եիս իղբալ ունիմ
երկաթէ կրկալը վզիտ շանց կուտամ

Գեյն ասավ էնդադա կու մնամ ամբը ծմակի
ակրիս կու կայցնիմ դո՛շի դմակին
քէ լավ էլ գցեցի էս իմ քա՛մակին
առուտեհան սարի ծէրին շանց կուտամ

Սայաթնօվեն ասավ եիս կարմիր կօվիմ
կօվկիթը կօտրիլ իմ հարսի հիդ խոսվիմ
գեյն մօդ քան շունիմ չօքնին կու գուլիմ
մեքամ էլա կուլի կաթնի համը շանց կուտամ*)

*) Բնագրի հարադատությունը պահպանված է անփոփոխ: Կետագրությունը բնագրում չաջակալում է: Բնագիրը տես Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, Ֆոնդ № 2, գործ № 2448: